

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՌԻՆԻ

պարսկական. գիր. դոկոր, ԵՊՀ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆՎԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Համիդյան կոտորածների ծավալումը վտանգված հայությունը սատարելու առաքելության կոչեց տարբեր երկրների մարդասերների: Գերմանացի բարեկամների հայօգնության աշխատանքները համակարգելու համար, Յոհաննես Լեփսիոսի նախաձեռնությամբ, 1896 թ. հունիսին ստեղծվեց Հայաստանի օգնության գերմանական միությունը, որը բաղկացած էր երկու՝ Բեռլինի եւ Ֆրանկֆուրտի հիմնական կոմիտեներից: Հայաստանի օգնության գերմանական միությունը կոտորածների տարբեր շրջաններում բացեց որբանոցներ, արհեստագործական ձեռնարկություններ եւ հիվանդանոցներ: Բեռլինի կոմիտեն, կարճ ժամանակ անց առանձնանալով, դարձավ ինքնուրույն կազմակերպություն եւ վերանվանվելով Գերմանական արեւելյան առաքելություն (այսուհետ՝ ԳԱԱ)՝ Լեփսիոսի ղեկավարությամբ հետեւողականորեն շարունակեց իր փրկարար աշխատանքները, որոնք անգնահատելի նշանակություն ունեցան սովամահության դատապարտված բազմահազար հայ որբերի եւ անօթեւան այրիների փրկության գործում:

Կոտորածներից հետո անասելի զրկալից պայմաններում տասնյակ հազարավոր հայ փախստականներ էին կուտակվել Թուրքիայի հարեւան երկրներում, որտեղ նրանք առանց աջակցության ի վիճակի չէին գոյատևել: Քանի որ փախստականները մեծ թիվ էին կազմում Պարսկաստանում, հատկապես Սալմաստի եւ Ուրմիայի շրջաններում, Լեփսիոսն ու նրա աշխատակիցները որոշեցին իրենց գործունեությունը ծավալել նաեւ այնտեղ: Ըստ այդմ՝ Դավիթ Իսմայել անունով մի ասորի ուսուցչի, որին Լեփսիոսն անձնապես ծանոթ էր, հանձնարարվեց այցելել կարիքի գոտիներ եւ վատթար վիճակում գտնվող փախստականներին ցուցաբերել առաջին օգնություն, միաժամանակ որբանոցային խնամքի վերցնելու նպատակով հավաքագրել որբ երեխաների¹:

¹ Տես „Das deutsche Hilfswerk für Armenien“, „Der Christliche Orient“ (այսուհետ՝ ChOr),

Դ. Իսմայելը նախ այցելեց Թավրիզ եւ Սալմաստ, որտեղ օթեւանել էին համապատասխանաբար 3000 ու 5000 փախստականներ, հիվանդներին եւ առավել ծանր դրույթյան մեջ գտնվողներին հագուստ, վերմակներ ու որոշ դրամ հատկացնելուց հետո մարտին մեկնեց Ուրմիա՝ ասորի փախստականների հիմնական հավաքատեղի՝ այնտեղ շարունակելով աշխատանքները²։ Նա տեղեկացնում է. «Ուրմիայում կա 10000 փախստական, ու դեռ այդքան էլ կլինեն Ուրմիայի եւ պարսկական սահմանի միջև։ Եթե Դուք կամենում եք նրանց համար ինչ-որ հիմնավոր բան անել, ապա որքան հնարավոր է շուտ այստեղ մի գերմանացի պետք է գա... Ես մինչ այժմ այցելել եմ 8000 փախստականի ու միայն փոքր օգնություն եմ կարողացել ցուցաբերել։ Կարիքը շատ մեծ է, իսկ իմ հնարավորությունները՝ չնչին»³։

Դ. Իսմայելի այդ տեղեկություն հիմամբ որոշվեց որբանոցը հիմնել Ուրմիայում, որտեղ նա սկսել էր որբերի հավաքագրումը⁴։ Այդ առաջադրանքը հանձնարարվեց պաստոր Հանս Ֆիշերին, որն իր կնոջ եւ երկու օրիորդների՝ Մարիա եւ Մարգարետ Պաուլատների հետ մայիսի 1-ին Բեռլինից ճանապարհվելով Պարսկաստան՝ երկու ամիս անց արդեն Ուրմիայում էր⁵։ Այնտեղ իրադրություն մանրազնին ուսումնասիրությունից հետո, սակայն, նպատակահարմար գտավ մեկ որբանոցով չբավարարվել, ինչը, անշուշտ, խորապես կշռադատված էր։ Հայ փախստականները, հիմնականում կենտրոնացած լինելով Սալմաստի շրջանում, Ուրմիայում մեծ թիվ չէին կազմում⁶։ Բացի այդ՝ այնտեղ արդեն հիմնվել եւ գործում էին բարեգործական մի շարք հաստատություններ, մինչդեռ Սալմաստի շրջանում քրդերի վայրագությունների, նաեւ հայ «հեղափոխականների

1897, էջ 331. Դ. Իսմայելին այդ նպատակով հատկացվել էր 11.000 մարկ. անդ, էջ 280։

² Անդ, էջ 279-280. խոսքը վերաբերում էր Թուրքիայի քրդական շրջաններում ապրող մոտ 20.000 նեստորական ասորիներին, որոնք 1895-1896 թթ.՝ քրդերի դեմ երկարատև պայքարից հետո, դիմեցին փախուստի՝ կուտակվելով հիմնականում Պարսկաստանի Ուրմիայի շրջանում։

³ Անդ։

⁴ Անդ։

⁵ Տե՛ս R. Schäfer, Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam 1932, էջ 15. Հ. Ֆիշերը ճանապարհին էջմիածնում այցելեց նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որը նրան խոստացավ իր աջակցությունը ցուցաբերել եւ Պարսկաստանում գտնվող քրիստոնեական հնագույն հաստատությունը՝ Ս. Թադեոսի վանքը, տրամադրեց նրան. „Das deutsche Hilfswerk für Armenien“, „ChOr“, 1897, էջ 331։

⁶ Տե՛ս H. Fischer, Aus unserer Arbeit in Persien, „ChOr“, 1897, էջ 422։

րի» վերաբերյալ ամենուր, այդ թվում՝ Եվրոպայում տարածված լուրերի պատճառով դեռ ոչ մի ընկերություն այնտեղ մուտք չէր գործել⁷:

Իրադրությունը տեղում ծանոթանալու եւ այդ լուրերի իսկությունն անձամբ ստուգելու նպատակով Հ. Ֆիշերն իր աշխատակիցների հետ մեկնեց Սալմաստ, որտեղ համոզվեց, որ «Հայ հեղափոխականների» առասպելը թուրքական իշխանությունների ստահող քարոզչության հետեւանքն էր եւ իրականությունը չէր համապատասխանում: Նա ընկերությունն ուղղված իր նամակներից մեկում գրում է. «Այն, ինչ այդտեղ հայերի հեղափոխական ձգտումների վերաբերյալ փսփսում են, ես համարում եմ սին հերյուրանք՝ հորինված Թուրքիայի պատվին: Արդյո՞ք հանցագործությունը, որը Եվրոպայի աչքերում այդ մարդկանց այնպես դատապարտելի է դարձնում, որ կարծես խուսքը վերաբերում է ահաբեկիչների եւ ռմբարկուների, այն է՝ նրանք ներգաղթող փախստականներին լեռներում փոքր-ինչ ընդառաջ են գնում՝ օգնելու եւ քրդերի հարձակումներից փրկելու համար: Կամ՝ գուցե այն, որ նրանցից ոմանք որսորդական հրացաններ ունեն՝ Այդ դեպքում ես էլ եմ հեղափոխական եւ նմանապես ամեն ոք Պարսկաստանում, ով այդպիսի զենքեր կարող է գնել, քանի որ բոլորն էլ դրանցից ունեն»⁸:

Որոշում կայացվեց Սալմաստում եւս առանձին օգնության առանձին մարմին հիմնելու վերաբերյալ: Ֆիշերն ու իր աշխատակիցները նախ գնեցին հաց եւ հագուստ՝ բաժանելով սովահարներին: Այնուհետեւ բուլորովին անօթեւանների համար Կալասար գյուղում վարձակալվեցին երկու աղքատանոցներ, որոնց կից հիմնվեց նաեւ հիվանդանոց՝ հանձնվելով մի հայ բժիշկի տնօրինությունը⁹: Բացի այդ՝ չքավոր կանանց համար

⁷ Անդ: Դրանց էությունը պարզաբանելու համար նշենք, որ Սալմաստում ձեւավորվել էին հայկական զինված խմբեր, որոնք իրենց առջեւ խնդիր էին դրել՝ հայ բնակչությանը պաշտպանել քրդական ցեղերի հարձակումներից: Նրանք Պարսկաստանի մահմեդական շրջաններում մեծ սարսափ էին տարածել, որից օգտվելով, սակայն, թուրքական իշխանությունները դարձյալ շահարկում էին «հայ հեղափոխականների»՝ հայտնի խաղաքարտը: Որոշակիորեն պարզ էր նաեւ այդ ամենի ենթատեքստը. Թուրքիայի սահմանի մոտ հայ փախստականների կուտակումները անհամագստություն էին պատճառում այդ երկրի կառավարությանը, որը, օգտվելով Պարսկաստանի կառավարության թուլությունից եւ թողտվությունից, ջանում էր հայկական տարրը թուլացնել եւ ոչնչացնել սահմանագոտում ապրող մահմեդական բնակչության միջոցով: Դա հնարավոր կլիներ միայն այն դեպքում, եթե հայերին արգելվեր զենք կրել. տես **M. Paulat**, *Meine Erlebnisse in Persien*, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“ (այսուհետ՝ „AAH“) , 1898, էջ 63:

⁸ **H. Fischer**, *Aus unserer Arbeit in Persien*, S. 423.

⁹ Տես **M. Paulat**, *Meine Erlebnisse in Persien*, „AAH“, 1898, էջ 62:

ստեղծվեց կարի արտադրամաս, որտեղ բավարար աշխատավարձով, հերթափոխային կարգով օրական աշխատում էին 40-50 կանայք՝ այդպիսով ի վիճակի լինելով իրենց ընտանիքների մասին հոգ տանել: Այնուհետև սկսվեց որբերի հավաքագրումն ու որբանոցի հիմնումը. վերջինս գտնվում էր Կալասարում վարձակալված մի երկհարկանի շենքում¹⁰:

Այսպես՝ 1897 թ. ամռանն Ուլմիայում հիմնվեց ասորական, իսկ Սալմաստում (Կալասար)՝ հայկական որբանոց, որի ժամանակավոր ղեկավարումը, Հ. Ֆիշերի ցուցումով, ստանձնեց ուլմիաբնակ հայ փախստական Միհրան Բաղդասարյանը¹¹: Այնտեղ ընդունվում եւ խնամվում էին հիմնականում 4-13 տարեկան երեխաներ, որոնց թիվը 1898 թ. սկզբին հասնում էր մոտ 30-ի¹²:

Ինչպես, սակայն, հետագայում պարզ դարձավ, Կալասարը, ապահովագրված չլինելով Թուրքիայի տարածքում գտնվող քրդական ցեղերի ավազակային հարձակումներից, որբանոցի համար հեռանկարային վայր չէր կարող լինել¹³, որի պատճառով եւ օրակարգ մտավ հաստատության շուտափույթ տեղափոխման խնդիրը: Դրա իրագործումը վիճակվեց ընկերություն՝ Պարսկաստանի մասնաճյուղերի նոր ղեկավար պաստոր Էդուարդ Ֆոն Բերգմանին, որը, մեկնելով այնտեղ, հուլիսից ձեռնամուխ էր եղել իր հանձնառությունների կատարմանը¹⁴:

Կալասարի որբանոցի համար առավել ապահով վայր գտնելու որոնումներն ի վերջո եզրափակվեցին Խոյի ընտրությամբ. վերջինս, չնայած մեծ մասամբ մահմեդականներով էր բնակեցված, սակայն ուներ հայկական թաղամաս եւ չրջապատված էր բացառապես հայկական գյուղերով¹⁵:

¹⁰ Անդ, էջ 26:

¹¹ Տե՛ս „Unser Waisenhaus zu Kalassar, in Salmas, Persien“, „AAH“, 1898, էջ 26:

¹² Տե՛ս „Unsere Waisenkinder in der Türkei, Persien und Bulgarien“, „AAH“, 1898, էջ 9. հմմտ. „Das Waisenhaus in Choi“, „AAH“, 1899, էջ 78:

¹³ Տե՛ս „Aus Persien“, „AAH“, 1898, էջ 124:

¹⁴ Տե՛ս **R. Schäfer**, Geschichte der Deutschen Orient-Mission, էջ 22: Պաստոր Ֆոն Բերգմանը, նախքան Պարսկաստան մեկնելը, քարոզչություն էր իրականացնում Բաքվում՝ աշխատակցելով Թիֆլիսի սինոդին. **J. Lepsius**, Reisebriefe von Dr. Johannes Lepsius, „AAH“, 1899, էջ 123: Հ. Ֆիշերի վերաբերյալ հետագայում տեղեկություններ չհաղորդվեցին: Ամենայն հավանականությամբ, իրագործելով որբանոցների հիմնումը, նա վերադարձել էր Գերմանիա:

¹⁵ Ընտրության հիմնավորվածությունն առավել պարզ կդառնա, եթե նկատի առնվի դրա նախապատմությունը. Պարսկաստան գալուց հետո Ֆոն Բերգմանը ստույգ աղբյուրներից իրազեկվեց, որ Խոյի շրջանի՝ մեկ տարի առաջ թուրքերի կողմից կողոպտված եւ ավերված հայկական գյուղերում սովամահությունից խուսափելու համար մի շարք

Քանի որ նախատեսված էր որբանոցում խնամքի վերցնել զրեթե 100 երեխայի, իսկ խոյում համապատասխան տարածք ունեցող որեւէ տուն չկար, Բերգմանը գնեց մի ընդարձակ հողամաս՝ շենքի կառուցումն այնտեղ իրականացնելու համար¹⁶։ Չնայած մահմեդական հոգեւորականության դիմադրությունը¹⁷՝ նրան հաջողվեց կառավարությունից ստանալ նաեւ շինարարության թույլտվություն։ Շինարարությունն ընթանում էր հնարավորին չափ արագ՝ նույնիսկ առանց այդ մասին ԳԱԱ-ին իրազեկ պահելու, քանի որ անհնար էր ասել, թե մահմեդական հոգեւորականության ընդդիմության պարագայում «իշխանությունների բարեհաճությունը որքան կշարունակվեր»¹⁸։ 1899 թ. ամռան վերջին շինարարությունն ավարտվեց եւ սեպտեմբերի 9-ին բնակեցվեց մինչ այդ հավաքագրված երեխաներով, որոնց թիվը, Կալասարից բերված 30 որբերի հետ միասին, հասնում էր 136-ի¹⁹։

100 երեխայի բնակություն համար նախատեսված որբանոցը, նրանց՝ անհամեմատ մեծ թվակազմին համապատասխանեցնելու նպատակով, հիմնական շենքին կից կառուցվեցին նաեւ երեք այլ օժանդակ շինություններ, որոնցից մեկը հատկացվեց ախոռի, շտեմարանների եւ ծառա-

հայ ընտանիքներ մահմեդականություն էին ընդունել։ Նմանապես հայտնի էր դարձել, որ մահմեդականները այնտեղ գտնվող բազմաթիվ որբերի պահում էին իրենց մոտ։ Խոյի հայերին կրոնափոխման հուսահատ քայլերից ետ պահելու համար նա մեկնեց այնտեղ եւ գործազուրկ տղամարդկանց բաժանեց անձնագրեր, ճանապարհաձախս եւ մեկ թուման լրացուցիչ գումար, որ վերջիններս աշխատելու համար կարողանան մեկնել Ռուսաստան։ Բերգմանը համոզված էր, որ նրանք այդպիսով ի վիճակի կլինեն հոգալ իրենց ընտանիքների ապրուստը։ Այնուհետեւ նա վճեց Խոյում մնացած որբերին հավաքել եւ տեղափոխել Կալասարի որբանոց, ինչը, սակայն, տեղի բնակիչների կողմից հանդիպեց որոշակի ընդդիմության։ Նրանցից շատերը համաձայնում էին որբերին տալ միայն այն դեպքում, եթե հաստատությունը հիմնվեր Խոյում։ Ուստի, երբ հասունացավ Կալասարի որբանոցի տեղափոխման խնդիրը, Բերգմանի ընտրությունը կանգ առավ Խոյի վրա. տես „Aus Persien“, „AAH“, 1898, էջ 124։

¹⁶ Անդ, էջ 126։ Հողամասը գնվեց 1600 մարկով, իսկ շինարարությունը, ըստ Բերգմանի հաշվարկների, պետք է արժենար ոչ ավել, քան 6000 մարկ։

¹⁷ Խոյի մոլեռանդ մուլաներն ու շեյխերը թշնամանքով ընդունեցին որբանոցի հիմնման փաստը եւ բողոքագիր ուղարկեցին Թեհրան՝ հայտարարելով, որ օտարերկրացիների ներկայությունը «ճշմարիտ հավատը վտանգում է»։ Նրանք սպառնում էին նույնիսկ հարձակվել որբանոցի վրա. տես „Das Waisenhaus in Choi“, „AAH“, 1899, էջ 79։

¹⁸ E. von Bergmann, Unsere Arbeit in Persien, „ChOr“, 1900, S. 19.

¹⁹ Տես „Das Waisenhaus in Choi“, „AAH“, 1899, էջ 78. հմմտ. E. von Bergmann, Unsere Arbeit in Persien, „ChOr“, 1900, էջ 19։ Ուշագրավ է, որ շենքի բնակեցումից մի քանի օր անց որբանոցի շինարարության առնչությամբ բարեհաճ տրամադրված՝ Խոյի, Սալմաստի եւ Ուրմիայի նահանգապետ Իկբալի Մյուլկն աշխատանքից հեռացվեց, ինչը, փաստորեն, արդարացնում էր Բերգմանի շտապողականությունը։

յողների բնակարանների, իսկ մյուսները՝ խոհանոցի, ճաշասրահի, հացատան, լվացքատան համար²⁰: Կարճ ժամանակահատվածում համալրվեց նաեւ մասնաճյուղի աշխատակազմը: Այդ նպատակով Լեփսիուսի հետ նրա՝ 1899 թ. ճամփորդության ընթացքում Պարսկաստան մեկնեցին պատուր Յոհաննես Արքեպիսկոպոս, Մաթիլդե Գարդհաուզենը եւ Մանյա Հենզելմանը²¹: Մայիսի 27-ին, երբ նրանք հասան Խոյ, Արքեպիսկոպոսը մասնաճյուղի ընդհանուր ղեկավարումը, Գարդհաուզենը տեղավորվեց աշխատանքի որբանոցում, իսկ Հենզելմանը տեղափոխվեց Ուրմիա՝ այնտեղի մանկատանը աշխատելու համար²²: Այդ աշխատաբաժանումը, սակայն, դարձյալ փոփոխվեց, քանի որ Արքեպիսկոպոսը ծանր հիվանդությունից պատճառով 1899 թ. ամռանը հարկադրված եղավ վերադառնալ Գերմանիա: Ուստի, Բերգմանի առաջարկով նրա պարտականությունները, այն է՝ Խոյի որբանոցի ղեկավարությունն ստանձնելու համար Ուրմիայից Խոյ տեղափոխվեց Հենզելմանը²³. վերջինիս փոխարեն Ուրմիայի որբանոցում աշխատելու համար 1900 թ. նոյեմբերի 7-ին ԳԱԱ-ի կողմից այնտեղ ուղարկվեց Աննա Ֆրիդեմանը²⁴:

Վերոնշյալ համալրումները, ի դեպ, կարեւոր էին ոչ միայն մասնաճյուղի աշխատակազմի ձեւավորման, այլեւ նաեւ Ուրմիայի, Վանի եւ Սալմաստի միջեւ ընկած չրջանների՝ ծանր իրավիճակում հայտնված հայ բնակչության համար: 1899 թ. համիդեական քրդերի դաժան հետապնդումների պատճառով նշյալ տարածքների հայ եւ ասորի բնակիչները փախչում էին Ռուսաստան, եւ քանի որ ռուսական սահմանակետից անցնելու թույլտվություն ստանում էին միայն ասորիները, մերժված հայերը վերադառնում էին Խոյ՝ ծայրահեղ զրկալից վիճակում պաշարելով որբանոցը²⁵: Բերգմանը հարկադրված էր տղամարդկանց ցույց տալ Սալմաստի ճանապարհը, որտեղ նրանք փորձում էին հայրենակիցների օգնությամբ

²⁰ Տե՛ս ААВ, 1899, էջ 157:

²¹ Տե՛ս „Mitteilungen“, „ААВ“, 1899, էջ 59. Թիֆլիսում նրանց միացան նաեւ Մովսես Ներսիսյանը եւ Հելենե Լազարը (ազգությամբ լատիշ), որոնցից առաջինը պատուր Բերգմանի կողմից իրավիճակ էր Խոյի որբանոցի դպրոցում, իսկ երկրորդը՝ խոհանոցում աշխատելու. J. Lepsius, Reisebriefe von Dr. Johannes Lepsius, էջ 124:

²² Անդ, էջ 125. հմմտ. „Erdbeben in Choi“, „ChOr“, 1900, էջ 56. Մ. Ներսիսյանին հանձնարարվեց թարգմանչի պարտականությունը՝ մինչ գերմանացի աշխատակիցները հայերենին կտիրապետեին. տե՛ս J. Lepsius, Reisebericht von Dr. Lepsius, „ААВ“, 1899, էջ 158:

²³ Տե՛ս E. von Bergmann, Unsere Arbeit in Persien, „ChOr“, 1900, էջ 19:

²⁴ Տե՛ս R. Schäfer, Geschichte der Deutschen Orient-Mission, էջ 36:

²⁵ Տե՛ս E. von Bergmann, Unsere Arbeit in Persien, „ChOr“, 1900, էջ 22:

օթեւան եւ աշխատանք գտնել, իսկ մինչ այդ նրանց կանանց եւ երեխաների խնամքը ժամանակավորապես ստանձնում էր որբանոցը: Բերգմանը նրանց համար կարողացավ ստեղծել աշխատանքի որոշակի հնարավորություններ²⁶, իսկ ցրտերն ընկնելուց հետո նրանց օթեւան տվեց որբանոցի շենքում: Դժվար է գնահատել այն օգնությունը, որ որբանոցն այդ շրջանում ցուցաբերեց հայ փախստականներին: Բերգմանը նկարագրում է. «Կանայք գալիս էին՝ ոտքերի վրա ցրտից գոյացած ուռուցքներով, հիվանդ եւ անօգնական: Ես չէի կարող նրանց ասել՝ հեռացե՛ք, ես միայն որբերի համար միջոցներ ունեմ: Նրանք գրեթե մեկ շաբաթ ինձ մոտ են եւ դեռ ի վիճակի չեն ուտել՝ առանց որովայնի սուր ցավերի»²⁷:

Կայանի առաջին տարիները լի էին փորձություններով. 1900 թ. մարտի 6-ին տեղի ունեցավ ուժգին երկրաշարժ, որը քաղաքում մեծ ավերածություններ գործեց՝ զգալի վնասներ պատճառելով նաեւ նորակառույց որբանոցին: Երբ ԳԱԱ-ի միջոցներով շենքը հիմնականում վերանորոգված էր²⁸, ստորգետնյա մեկ այլ ցնցման պատճառով, որ տեղի ունեցավ նույն թվականի սեպտեմբերի 13-ին, այն կրկին հայտնվեց վթարային վիճակում. որոշ ժամանակ անց՝ գարնանը, ենթարկվեց մասնակի փլուզման, որին դարձյալ հետեւեցին նորոգման ծախսաշատ աշխատանքները²⁹:

Սկզբնական շրջանում շարունակվում էր թշնամանքի դրսևորումը մահմեդական կրոնավորների շրջանում, որոնք, փորձելով միջամտել հաստատությունների ներքին գործերին, չէին խուսափում նույնիսկ բացահայտ առճակատումներից³⁰: Բարեբախտաբար, այդ առնչությունները հենցելմանի՝ քաղաքագլխին ուղղված բողոքները հասան իրենց նպատակին, եւ վերջինս նրան հատկացրեց որբանոցի անվտանգությունն ապահովման մի գրավոր հրամանագիր՝ տրամադրելով նաեւ երկու հսկիչ³¹: Այլապես,

²⁶ Որբանոցի համար պատրաստի ապրանքներ (հատակի ծածկույթ, գործվածքեղեն եւ այլն) գնելու փոխարեն, նա գնում էր հումք եւ դրանց պատրաստումը, համապատասխան վճարման դիմաց, հանձնարարում այդ կանանց. անդ, էջ 24:

²⁷ Անդ. նրանց թվի վերաբերյալ, ցավոք, ստույգ տեղեկություններ չեն հաղորդվում:

²⁸ Տես **M. Henselmann**, Erdbeben in Choi, „ChOr“, 1900, էջ 56-57:

²⁹ Տես **M. Henselmann**, Neues Erdbeben, էջ 158:

³⁰ Մահմեդական կրոնավորները գալիս էին որբանոց՝ պահանջելով թույլ տալ շենքը խուզարկել: Արգելքի հանդիպելով՝ ծեծում էին որբանոցի աշխատակիցներին եւ փորձում տարաբնույթ առճակատումներ ստեղծել. տես „Briefe aus Choi“, „ChOr“, 1900, էջ 135:

³¹ Անդ:

ինչպես հուշում էին հետագա զարգացումները, մահմեդականների վարքագիծը կարող էր անկանխատեսելի հետեւանքներ ունենալ³²:

Այնուամենայնիվ, ժամանակն իր դերը կատարում էր. 1900 թ. վերջին այդ տրամադրությունները տեղի էին տալիս, իսկ որբանոցի համբավը քաղաքում նկատելիորեն աճում էր. հանգամանք, որ առավելապես պայմանավորված էր քաղաքի անօգնական հիվանդ բնակիչներին, նրանց թվում նաեւ որոշ մահմեդականների՝ Մ. Հենզելմանի եւ նրա գործընկերների կողմից ղեկորայքի հատկացումով: Հենզելմանը նշում է. «Քանի որ մենք ունեզուրկ հիվանդ մահմեդականներին կարողացել ենք օգնել, բնակչության սրտում տեղ ենք նվաճել»³³:

Ուսումնաարտադրական նպատակով արհեստագործությունը զարգացելու համար ԳԱԱ-ի կողմից 1901 թ. գարնանը Խոյ ուղարկվեց գերմանացի ատաղձագործ Հերման Շուբերտը³⁴, իսկ տարեվերջին նրան փոխարինեց Մաքս Շյունեմանը, որը մեծ դեր խաղաց մասնաճյուղի ուսումնաարտադրական կյանքում³⁵:

1902 թ. փետրվարին ԳԱԱ-ի հանձնարարությամբ Պարսկաստանի մասնաճյուղերի տեսչական վերահսկողությունն ստանձնեց պաստոր Դետվիգ ֆոն Օերցենը³⁶: Նրա նշանակումից կարճ ժամանակ անց՝ մարտի 15-ին, Մ. Հենզելմանն առողջության վերականգնման նպատակով ծառայությունից հրաժարվեց եւ վերադարձավ Գերմանիա³⁷: Մինչ որբանոցի նոր ղեկավար գտնելը՝ այդ պարտականությունը եւս հանձնարարվեց Դետվիգ ֆոն Օերցենին, իսկ նրան օգնելու համար ԳԱԱ-ի միջնորդությամբ ժամանակավորապես այնտեղ հաստատվեց նաեւ Պաուլինե Պատրունկին: Այդ անորոշ իրադրությունը, սակայն, երկար չշարունակվեց: Ամռանը ԳԱԱ-ի առաջարկով որբանոցի ղեկավարությունը ստանձնեց Աննա Հառնակը, որը 1902 թ. օգոստոսի 2-ին արդեն Խոյում էր եւ ողջ

³² Դրա վկայությունն էր 1901 թ. փետրվարի 23-ի դեպքը, երբ որբանոցի վրա տեղացի կրակահերթ: Հենզելմանը, նրա աշխատակիցներն ու երեխաները միայն պատահականությամբ մնացին անվնաս. տես „Gnädige Bewahrung von Frl. Henselmann“, „ChOr“, 1901, էջ 39:

³³ „Briefe aus Choi“, „ChOr“, 1901, S. 140.

³⁴ Տես **M. Henselmann**, Gefahr und Bewahrung in Choi, „ChOr“, 1901, էջ 85-86:

³⁵ Տես **M. Schünemann**, Industrie- und Handwerk-Schule der DOM in Khoi, „ChOr“, 1905, էջ 66:

³⁶ Տես „Mitteilungen“, „ChOr“, 1902, էջ 32:

³⁷ Անդ, էջ 80:

նվիրումով ձեռնամուխ լինելով հաստատությունների բարգավաճմանը՝ դարձավ կայանի մեծագույն երախտավորներից մեկը³⁸:

Որբանոցի սաների կրթությունը պատշաճ կազմակերպելու համար դպրոցում աշխատանքի ընդունվեցին շնորհալի հայ ուսուցիչներ, որոնց կազմը 1909-ից համալրվում էր նաեւ հաստատության «չըջանավարտներով»³⁹: Երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպվում էր հայ ազգային եւ եկեղեցական ավանդույթների հիմքի վրա՝ զերծ քարոզչության կամ դավանափոխության որեւէ միտումից: Ուշագրավ է, սակայն, որ Ա. Հառնակի եւ իր աշխատակիցների «ոչ քարոզչական» աշխատառճը պայմանավորված էր ոչ միայն Լեփսիոսի եւ նրա ընկերության՝ որդեգրած սկզբունքներին հավատարիմ մնալու անհրաժեշտությամբ, այլ նաեւ ուներ սեփական փորձառության մարակայված դրդումներ: Այդ էր, թերեւս, պատճառը, որ նրանք հաճախ հանդես էին գալիս ծավալուն հրապարակումներով՝ ըստ ամենայնի հիմնավորելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատացյալների եւ որբանոցի երեխաների շրջանում քարոզչության իրականացման անթույլատրելիությունը: Այդ առումով առանձնապես բնութագրական է Օերցենի 1903 թ. հրատարակած «Մեր որբ երեխաների եկեղեցական պատկանելությունը» հոդվածը, որտեղ նա խնդիրը դիտարկում էր տարբեր տեսանկյուններից⁴⁰: Նա նշում է. «Գերմանական պետական օրենքները Գերմանիայում արգելում են կաթոլիկ ծնողների որբացած երեխաներին ավետարանչական եկեղեցում դաստիարակել, ուրեմն ինչո՞ւ դա պետք է թույլատրելի լինի հայ քրիստոնյաների որբերի հանդեպ: Առավել եւս, երբ այդ դեպքում երեխաները պետք է պատկանեն մի եկեղեցու, որի խնամքն ու հոգատարությունը հետագայում չեն վայելելու: Չէ՞ որ Պարսկաստանում, ինչպես Արեւելքի մյուս երկրներում, Գերմանական ավետարանչական եկեղեցի չկա, եւ նրանք կորբանան նաեւ եկեղեցու առումով»⁴¹:

Օերցենի համոզմամբ՝ «...չնայած Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կարծրացած է՝ պահպանել սովորույթներ, ուսմունքներ եւ այլն, որոնց

³⁸ Տե՛ս **A. Harnack**, Reiseberichte, „ChOr“, 1902, էջ 183:

³⁹ Տե՛ս **A. Harnack**, Aus der Arbeit in Khoi, „ChOr“, 1913, էջ 99-102. հմմտ. նույն հեղինակի՝ „Russland in Persien“, „ChOr“, 1912, էջ 73, „Aus der Arbeit in Khoi“, „ChOr“, 1913, էջ 102, „Bilder aus dem muhammedanischen Leben“, „ChOr“, 1914, էջ 91:

⁴⁰ Տե՛ս **D. von Oerzen**, Die kirchliche Stellung unserer Waisen Kinder, „ChOr“, 1903, էջ 177-181:

⁴¹ Անդ, էջ 177:

հետ մենք, որպես ավետարանչական քրիստոնյաներ, չենք կարող համաձայնել, սակայն մի⁴² թե իրավունք ունենք որպես մրցակիցներ հանդես գալու նրա դեմ, որը, չնայած իր բոլոր թուլություններին եւ հիվանդություններին, կոտորածների ժամանակ քրիստոնյա հազարավոր նահատակներ է տվել»⁴²:

Այսպիսով, Օերցենն ընդգիմանում էր Հայ Եկեղեցու «անկենդանություն» վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետներին, քանի որ անկենդան Եկեղեցուց նահատակներ դուրս գալ չէին կարող: Ավելին՝ Հայ Եկեղեցու բարենորոգության ձգտումները եւ այն հանգամանքը, որ հայ հոգեւորականներից շատերն էին մեկնում Գերմանիա՝ աստվածաբանություն ուսանելու⁴³, հուշում էին, որ այդ Եկեղեցին ունի անհրաժեշտ ներուժ եւ միջամտության կարիք չի զգում⁴⁴: Բացի այդ՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ոչ միայն չի բռնանում խղճի ազատության վրա, այլեւ «անհավատալի համբերատար է» եւ նույնիսկ իր հավատացյալներին չի արգելում մասնակցել այլ եկեղեցիների ժամերգություններին, այնպես որ «հասարակ հավատացյալը, եթե մի փոքր քրիստոնեական համբերատարություն եւ սեր է սովորել, Հայ Առաքելական Եկեղեցում ոչ միայն կարող է պահպանել իր ավետարանական հավատը, այլեւ գործել նրա համար»⁴⁵: Ըստ Օերցենի՝ սխալ է որեւէ Եկեղեցու վերաբերյալ կարծիք կազմել՝ հենվելով միայն նրա արարողակարգի ձեւային տարբերությունների վրա: Նման ընկալումները կարող են հանգեցնել թյուրիմացությունների, քանի որ «ձեւերն ու էությունը տարբեր իրողություններ են»⁴⁶:

Օերցենն իր տեսակետները հիմնավորելու համար վկայակոչում էր Մ. Լութերին, որը, որքան էլ անողոր էր Կաթոլիկ Եկեղեցու մոլորությունների հանդեպ, այնուամենայնիվ, պահպանեց նրա դավանաբանության եւ արարողակարգի բազմաթիվ տարրեր⁴⁷: Նա իր տեսակետները հաստատում էր՝ վկայակոչելով նաեւ ամերիկացի քարոզիչների օրինակը, որոնց

⁴² Անդ, էջ 178:

⁴³ Նկատի ունի Կարապետ Տեր-Մկրտչյանին, Երվանդ Տեր-Մինասյանին եւ հայ մյուս հոգեւորականներին, որոնք „Das Notwendige Liebeswerk“ ընկերության աջակցությամբ ուսանել էին Գերմանական համալսարաններում. տես **Hacik Rafi Gazer**, Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts, Göttingen, 1996:

⁴⁴ Տես **D. von Oerzen**, Die kirchliche Stellung unserer Waisenkinder, „ChOr“, 1903, էջ 178:

⁴⁵ Անդ, էջ 181:

⁴⁶ Անդ, էջ 180:

⁴⁷ Անդ:

գործունեությունն այլ արդյունք չէր ունեցել, քան համայնքների պառակտումն ու ջլատումը⁴⁸:

Այսպիսով, մասնաճյուղի աշխատակիցներն անթույլատրելի էին համարում քարոզչության իրականացումը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատացյալների շրջանում: Ի տարբերություն Հայաստանում եւ Պարսկաստանի հայաշատ վայրերում գործող այլ ընկերությունների՝ նրանք որբախնամ աշխատանքի հետ մեկտեղ իրենց հիմնական առաջադրանքը համարում էին Արեւելքում կրթության եւ լուսավորության տարածումը, որ պետք է կատարվեր դպրոցի միջոցով. մի առաքելություն, որը, նրանց համոզմամբ, կարող էին իրագործել միմիայն հայերը: Թուրքերը եւ մահմեդական մյուս ժողովուրդները, միանգամայն անտարբեր լինելով կրթության եւ լուսավորության հանդեպ, բնականաբար, որեւէ դեր չէին կարող խաղալ Արեւելքի զարգացման հարցում: «Թուրքերը, - նշում էր այդ առնչությամբ Ա. Հառնակը, - աշխարհում միակ ժողովուրդն են, բացառությամբ հոտենտոտների եւ Ավստրալիայի նեգրերի, որոնց գիտակցությանը մինչեւ այժմ դեռ չի հասել իրենց երեխաներին պատշաճ կրթություն տալու անհրաժեշտությունը»⁴⁹:

Նրա համոզմամբ՝ հայերից բացի ոչ ոք, նույնիսկ Արեւելքի մյուս քրիստոնյա ժողովուրդներն ի վիճակի չէին իրականացնելու այդ առաքելությունը: Ա. Հառնակը գրում է. «Պարսկաստանի եւ ասիական Թուրքիայի բացման ու մշակութային զարգացման համար, որն այժմ սկսվելու է կամ ավելի շուտ արդեն սկսվել է ճանապարհաշինությամբ եւ սահմանադրության ներմուծմամբ, հայերը պետք է կատարեն գլխավոր աշխատանքը, քանի որ նրանք խելք եւ նկարագիր ունեն, մինչդեռ հույներն ու ասորիները խելք ունեն, սակայն ընդգծուն նկարագիր՝ ոչ: Մեր առաջադրանքն է հայերին դրա համար նախապատրաստել, այսինքն՝ սկզբում երիտասարդության համար պատրաստել քրիստոնյա գործուն ուսուցիչներ»⁵⁰:

Որբանոցի ղեկավարության կողմից դպրոցի հանդեպ ցուցաբերվող հոգատարությունը եւ ուղադրությունը պայմանավորված էր նաեւ վերջինիս նշանակության գիտակցմամբ: Դպրոցի աշխատանքներն անձամբ վերահսկում էր Ա. Հառնակը, որը միաժամանակ այնտեղ դասավանդում էր կրոն, պատմություն, աշխարհագրություն, հետազայում նաեւ թվա-

⁴⁸ Անդ, էջ 178:

⁴⁹ A. Harnack, Aus der Arbeit in Khoi, „ChOr“, 1913, S. 100.

⁵⁰ Անդ:

բանություն⁵¹, իսկ 1904 թ. դեկտեմբերին նրան օգնելու համար խոյ մեկնեց Մետա Շուլենբուրգը⁵²: Նրանք որբանոցում 1905 թ. հիմնեցին նաեւ մի մանկապարտեզ, որտեղ նախադպրոցական տարիքի երեխաները, խաղերից զատ, սովորում էին գեղեցիկ երգեր եւ աստվածաշնչյան հետաքրքիր պատմություններ⁵³. այստեղ, բացի հաստատության սաներից, ընդգրկվեցին նաեւ մերձակա հայ ընտանիքների երեխաները⁵⁴:

1903 թ. Ա. Հառնակը մի փոքրիկ դպրոց էր բացել նաեւ հարեւան Շորաֆ գյուղում՝ այն պահելով մշտական հսկողության ներքո: Նա հաճախ դրամական օգնություն էր ցուցաբերում նաեւ խոյի հայկական դպրոցին⁵⁵: Այդ փաստերն ակնհայտ վկայում էին, որ նա ձգտում էր կրթության հնարավորություն ստեղծել նաեւ մյուս երեխաների ու երիտասարդների համար: «Մենք պետք է հասնենք նրան, որ մեր բարեգործությունը, այն է՝ քրիստոնեական լավ դաստիարակություն եւ կրթություն, տրամադրենք ոչ միայն որբերին, այլ նաեւ մյուսներին: Այլապես այստեղի երեխաների համար որբ լինելը կդառնա «արտոնություն», քանի որ նույնիսկ ամենաօժտված երեխաները մնում են առանց կրթության»⁵⁶:

Ա. Հառնակը համոզված էր, որ այդ կերպ հնարավոր կլինեւ հաստատության ազդեցությունը մեծացնել երիտասարդների շրջանում՝ նպաստելով այնպիսի «հիվանդությունների» վերացմանը, ինչպիսիք էին «մատերիալիզմը, աթեիզմը», փոխարենը նրանց տալով քրիստոնեական դաստիարակություն⁵⁷: Նշյալ աշխարհայացքների դեմ պայքարը, ըստ Ա. Հառնակի, առավելապես պետք է կազմակերպվեր հայ բնակչության մեջ, քանի որ միայն հայերն էին ի վիճակի իրականացնելու Արեւելքի զարգացման առաքելությունը⁵⁸:

Այսպիսով, Ա. Հառնակը որբանոցի նշանակությունը կարեւորում էր ոչ միայն որբերի խնամքի, այլ նաեւ բնակչության շրջանում լուսավո-

⁵¹ Տե՛ս **A. Harnack**, Russland in Persien, „ChOr“, 1912, էջ 72-73:

⁵² Տե՛ս „Aus unseren Stationen“, „ChOr“, 1905, էջ 5:

⁵³ Տե՛ս **A. Harnack**, Aus der Arbeit in Khoi, „ChOr“, 1913, էջ 99: Մանկապարտեզում (այն կոչվում էր նաեւ փոքրիկների դպրոց) դասավանդումը հանձնարարվել էր որբանոցի երկու շնորհալի սանուհիների. **M. v. d. Schulenburg**, Aus der Schule in Khoi, „ChOr“, 1905, էջ 101:

⁵⁴ Տե՛ս **A. Harnack**, Aus der Arbeit in Khoi, „ChOr“, 1913, էջ 99:

⁵⁵ Տե՛ս **S. Garabedian**, Khoi und unsere Arbeit, „ChOr“, 1912, էջ 33:

⁵⁶ **A. Harnack**, Arschak Simonjan, „ChOr“, 1912, S. 118. հատկանշական է, որ Հառնակը առանձնահատուկ հոգատարություն էր դրսևորում օժտված երեխաների նկատմամբ:

⁵⁷ Տե՛ս **A. Harnack**, Nachrichten aus Stationen, „ChOr“, 1908, էջ 71:

⁵⁸ Տե՛ս **S. Garabedian**, Khoi und unsere Arbeit, „ChOr“, 1912, էջ 33:

րության տարածման եւ կրոնական գիտակցության ամրակայման առումով՝ ի դեմս Հաստատության երեխաների տեսնելով ապագա «սերմնացաններին»⁵⁹: «Պետք է միշտ աչքի առջեւ ունենանք ողջ ժողովրդի ապագան եւ յուրաքանչյուր երեխայի դաստիարակենք այնպես, որ նա, սեփական ուժերին եւ ունակություններին Համապատասխան, իր միջավայրին օգտակար լինի»⁶⁰:

Ա. Հառնակի գործունեությունը ջերմ գնահատանքի էր արժանանում ոչ միայն Հայ բնակչության, այլ նաեւ Եկեղեցու կողմից: Դրա ակնառու վկայությունն էր այն, որ 1911 թ. Թավրիզի արքեպիսկոպոսը դիմեց նրան՝ խնդրելով ստանձնել նաեւ Խոյի դպրոցի վերահսկողությունը: Ա. Հառնակի հանձնարարությունը այդ պարտականությունն ավելի քան մեկ տարի իրականացնում էր նրա օգնական Զաքար Կարապետյանը⁶¹: Երբ դպրոցը նյութական պայմանների սղություն հետեւանքով փակվեց, ընդառաջելով ծնողների խնդրանքին՝ Ա. Հառնակը կրթօջախի երեխաներին (թվով 50) թուլյատրեց հաճախել որբանոցի դպրոցը⁶²: Ընդ որում՝ չատերը տարեկան 2 թուման կամ 8 մարկ կազմող ուսման վարձը վճարում էին մասնակի, իսկ ովքեր ի վիճակի չէին, ամենեւին չէին վճարում⁶³. հանգամանք, որ բոլոր ցանկացողներին հնարավորություն էր ընձեռում ուսանել դպրոցում:

Այսպիսով, որբանոցի դպրոցը 1912-ից դարձավ Խոյի Հայ համայնքի միակ կրթօջախը⁶⁴: 1913 թ. այնտեղ սովորում էր 77 երեխա, որոնցից 49-ը դրսից էր, իսկ 28-ը՝ որբանոցից⁶⁵: Ա. Հառնակը նշում է. «Մեր այժմյան հաջողությունն ինձ համար միայն սկիզբ է, որից, հավանաբար, կգարգանա կրթական մի հաստատություն, որ ժամանակի ընթացքում մեզ այս տարածաշրջանների համար աշխատուժ կտրամադրի»⁶⁶:

⁵⁹ Տե՛ս **A. Harnack**, Ist es nötig, dass wir unsere Waisenarbeit aufrecht erhalten?, „ChOr“, 1914, էջ 79-80:

⁶⁰ **A. Harnack**, Bitte um Pflegeeltern für neu aufgenommenen Waisenkinder, „ChOr“, 1914, S. 54.

⁶¹ Տե՛ս **S. Garabedian**, Khoi und unsere Arbeit, „ChOr“, 1912, էջ 33:

⁶² Անդ. հմմտ. **A. Harnack**, Russland in Persien, „ChOr“, 1912, էջ 72-73:

⁶³ Տե՛ս **A. Harnack**, Aus der Arbeit in Khoi, „ChOr“, 1913, էջ 99:

⁶⁴ 1910 թ. նրանց թվաքանակը հասնում էր 20-ի. տե՛ս **A. Harnack**, Deutsche Arbeit in Persien, „ChOr“, 1910, էջ 148:

⁶⁵ Տե՛ս **A. Harnack**, Aus der Arbeit in Khoi, „ChOr“, 1913, էջ 99. դպրոցն ուներ գեղեցիկ կահավորված երեք դասասենյակներ:

⁶⁶ Անդ, էջ 100:

Ինչեւէ, տարիների ընթացքում որբանոցում խնամվող երեխաների թվաքանակը նկատելիորեն նվազում էր: Եթե 1900-1901 թթ. այնտեղ խնամվում էր 120 երեխա, իսկ 1902-1905 թթ.՝ 89⁶⁷, ապա 1910 թ. նրանց թիվը նվազել էր 35-ի⁶⁸. չնայած դրան՝ դպրոցի հեղինակությունն ու համբավը տարածվում էին⁶⁹: Այն իր հաջողությունների համար առաջին հերթին պարտական էր Ա. Հառնակին եւ մյուս դասավանդողներին:

Ուսմանը զուգահեռ՝ մեծ ուշադրություն էր դարձվում նաեւ երեխաների արհեստագործական հմտությունների զարգացմանը: Եթե աղջիկները դեռեւս Հենգելմանի ղեկավարության շրջանում սովորում էին կարել եւ գործել⁷⁰, ու այդ ավանդույթը շարունակվեց նաեւ Հառնակի օրոք⁷¹, ապա տղաների համար կյանքի կոչվեցին առավել ընդգրկուն մտահղացումներ: Արհեստագործության զարգացումը կարեւոր էր երեխաներին ապագայում գոյատեւման ինքնուրույն հնարավորություն ընձեռելու առումով: Նպատակային զարգացման դեպքում այն կարող էր որբանոցի համար նաեւ եկամտի աղբյուր⁷², մահմեդական շրջանների հետ օգտավետ շփումների կամ անուղղակի «քարոզչության» միջոց դառնալ: Մ. Շյունեմանը նշում է. «Պարսկաստանում, որտեղ միսիոները մեծ դժվարությամբ է կարողանում՝ բռնազբոսիկ քաղաքավարության, կեղծիքի ու ստի դիմակը, բնածին փակվածության եւ կեղծավորության պատենշը հաղթահարելով, մերձենալ մարդկանց հոգուն, արհեստագործի համար առկա է մի լուին եւ, ըստ այդմ, առավել ներգործուն ասպարեզ... Արհեստագործի առաջադրանքը՝ դառնալ լուռ քարոզիչ, պետք է իրականացվի նաեւ մեր արհեստանոցներում»⁷³:

Նախ անհրաժեշտ էր պարզել, թե որբանոցում որ ճյուղերը պետք է զարգացնեին, քանի որ մահմեդական մոլեռանդ երկրում, ինչպիսին

⁶⁷ Տե՛ս E. von Bergmann, Unsere Arbeit in Persien, „ChOr“, 1900, էջ 25. հմմտ. U. Feigel, Das evangelische Deutschland und Armenien, Göttingen, 1989, էջ 118:

⁶⁸ Տե՛ս A. Harnack, Deutsche Arbeit in Persien, „ChOr“, 1910, էջ 148: Մյուս տարիների վերաբերյալ ճշգրիտ տվյալներ չեն պահպանվել: Որբանոցի սաների թվաքանակի նվազումը պայմանավորված էր որբ եւ անպաշտպան երեխաների թվի նվազմամբ. „Aus Choi“, „ChOr“, 1911, էջ 123. հմմտ. S. Garabedian, Vom Waisenhaus in Khoi, էջ 167:

⁶⁹ Տե՛ս A. Harnack, Aus der Arbeit in Khoi, „ChOr“, 1913, էջ 100-101:

⁷⁰ Տե՛ս M. Gardthausen, Neues Erdbeben, „ChOr“, 1900, էջ 159:

⁷¹ Տե՛ս A. Harnack, Bericht aus Khoi, „ChOr“, 1910, էջ 203-204:

⁷² Տե՛ս M. Schünemann, Tischlereibericht aus Choi, „ChOr“, 1902, էջ 169:

⁷³ Տե՛ս M. Schünemann, Industrie- und Handwerk-Schule der DOM in Khoi, „ChOr“, 1905, էջ 70-71:

Պարսկաստանն էր, քրիստոնյաները զրկված էին որոշ արհեստներով զբաղվելու հնարավորությունից՝ չունենալով համապատասխան շուկա: Մահմեդականները պիղծ էին համարում այն ամենը, ինչին դիպչում էր քրիստոնյաների ձեռքը, մասնավորապես, եթե առկա էր խոնավության գործոնը, այսինքն՝ պատրաստման ընթացքում առարկան կարող էր խոնավանալ կամ թրջվել⁷⁴, ուստի որոշվեց նախապատվությունը տալ չոր փայտի հետ կատարվող աշխատանքներին, կահագործությունը եւ պայտագործությունը⁷⁵:

Ամիսներ շարունակ Մ. Շյունեմանը ջանադրաբար հայերեն էր սովորում, որ կարողանար հաղորդակցվել երեխաների հետ: Քիչ ժամանակ չպահանջվեց նաեւ տեղական կլիմային, փայտի առանձնահատկություններին եւ շուկայի պահանջներին ծանոթանալու համար: Այդ դժվարությունները, սակայն, չուտով հաղթահարվեցին, եւ աշխատանքը մտավ իր բնականոն հունի մեջ: Խոյից դուրս՝ մասնավորապես Ուրմիայում եւ Թավրիզում շուկա ձեռք բերելու համար Մ. Շյունեմանը նախագծեց եւ կազմակերպեց կահագործական այնպիսի առարկաների արտադրություն, որոնք հնարավոր էր մաս-մաս տեղափոխել եւ վերահավաքել այնտեղ: Այդ ձեռնարկն ունեցավ մեծ հաջողություն, եւ արդեն երկրորդ տարում Թավրիզից տրվեցին պատվերներ⁷⁶:

Առաջին հաջողություններին զուգահեռ՝ կատարվում էր գործիքների, հաստոցների համալրում, եւ աշխատանքն ավելի լայն թափ էր ստանում՝ հնարավորություն ընձեռելով մեծացնել նաեւ աշակերտների թվաքանակը: Եթե 1902 թ. սկզբին Մ. Շյունեմանն իր գործունեությունն սկսեց որբանոցի 4 տղաների հետ, իսկ տարեվերջին նրանց թիվը հասավ 5-ի, ապա 1903 թ. նրա մոտ աշակերտում էին 9-ը, եւս մեկ տարի անց՝ 15-ը⁷⁷: Որբանոցի արհեստագործական ձեռնարկությունը կարճ ժամանակում մեծ

⁷⁴ Մահմեդականները քրիստոնյաների ձեռքով պատրաստված կոշիկներ չէին հագնում, քանի որ պատրաստողի ձեռքը դիպել էր խոնավ կաշվին եւ այն «պղծել»: Նմանապես անմաքուր էին համարվում նաեւ քրիստոնյաների պատրաստած մթերքները, ձեռագործերը (որոնք իբրեւ թե պատրաստվել են խոնավացած մատներով) եւ այլն: Նույնիսկ հյուսնագործական առարկաները լաքապատման եւ ողորկման դեպքում պիղծ էին համարվում, քանի որ, մահմեդականների կարծիքով, դրանց խոնավ մակերեսային կարող էր խառնված լինել քրիստոնյաների քրտինքը. անդ, էջ 66:

⁷⁵ Անդ:

⁷⁶ Անդ, էջ 67:

⁷⁷ Արհեստանոցները, օրինակ, ԳԱԱ-ի կողմից 1902 թ. համալրվեցին 1000, 1903 թ.՝ 2200, իսկ 1904 թ.՝ 2200 մարկ արժողությամբ շարժական գույքով. անդ, էջ 69:

Համարում ստացավ ոչ միայն խոյում, այլ նաեւ Թավրիզում, Ուլմիայում եւ այլուր: Չնայած այն հետզհետեւ ընդլայնվում եւ առավել եկամտաբեր էր դառնում (1904 թ. այն ունեցավ շուրջ 1000 մարկ եկամուտ), սակայն ի վիճակի չէր բավարարելու արագ աճող շուկայական պահանջարկը: 1905 թ., օրինակ, ընդունվեց 4000 մարկի պատվեր, մինչդեռ Մ. Շյունեմանը հարկադրված էր մերժել եռապատիկ ավելին՝ համապատասխան տարածքի, նյութատեխնիկական բազայի եւ մասնագիտական ուժի բացակայության պատճառով: Աշակերտների մեծ մասը 1905 թ. դեռ գտնվում էր ուսուցման փուլում եւ ինքնուրույն չէր կարող աշխատել: Բացի այդ՝ նրանց թիվն էականորեն ավելացնելու հնարավորությունն եւս չկար, քանի որ դրա համար առկա չէին աշխատատարածք ու սարքավորումներ⁷⁸:

Թե՛ Շյունեմանը եւ թե՛ ԳԱԱ-ի ղեկավարությունն այդ հիմնահարցի լուծման համար միայն մեկ ճանապարհ էին տեսնում. որբանոցի մոտակայքում գնել մի հողամաս եւ այնտեղ կառուցել նոր, ընդարձակ եւ նորագույն սարքավորումներով ու հաստոցներով զինված ձեռնարկություններ⁷⁹: 1905 թ. ամռան սկզբին այդ ձեռնարկի իրականացմանը կազմակերպչական ընթացք տալու համար հիմնվեց «Պարսկաստանում միսիայի արդյունաբերության կազմակերպման հատուկ կոմիտե», որի կազմում, ի թիվս այլոց, ընդգրկվեցին ԳԱԱ-ի տնօրեն Յոհաննես Լեփսիուսը, Դ. Ֆոն Օերցենն ու Գերմանական արեւելյան առեւտրաարդյունաբերական ՍՊԸ-ի կառավարիչ Կ. Ռուբիչոնգը⁸⁰, որին եւ արտոնվեց ձեռնարկությունների գործունեության կազմակերպումը: Քանի որ այդպիսով ձեռնարկությունները դադարում էին իրավականորեն ԳԱԱ-ի ենթակայության տակ գտնվել, վերջինս դրանց վերաբերյալ այլեւս տեղեկություններ չհրապարակեց: Հայտնի է միայն, որ սկզբնապես նախատեսված էր աշխատատեղեր ստեղծել 30 երեխայի համար, եւ այդ նպատակի համար անհրաժեշտ 30.000 մարկը՝ 1000-ական մարկի փոխատվության տեսքով, ստանալ 30 փոխատուներից⁸¹: Հուլիսին 30 փոխատուներից 7-ը

⁷⁸ Տե՛ս **M. Schünemann**, Industrie- und Handwerk-Schule der DOM in Khoi, „ChOr“, 1905, էջ 69:

⁷⁹ Այդ ծրագրի իրագործման դեպքում ձեռնարկություններն ի վիճակի կլինեին ոչ միայն ինքնուրույն գոյատևել, այլ ունենալ շահույթներ. տե՛ս **J. Lepsius**, Daheim und draußen, էջ 127:

⁸⁰ Տե՛ս „ChOr“, 1905, էջ 71-72:

⁸¹ Տե՛ս **M. Schünemann**, Industrie- und Handwerk-Schule der DOM in Khoi, էջ 67:

արդեն գտնվել էին, եւ դրամի հայթայթումը շարունակվում էր⁸²: Հայտնի է նաեւ, որ ընդլայնվող աշխատանքներում Մ. Շյունեմանին օգնելու նպատակով ամուսնը ինչ էր ուղարկվել երկրորդ ատաղձագործ վարպետը՝ Ռոսները, որի հետ, ձեռնարկությունների զինման համար, առաքվել էին նաեւ սարքավորումներ⁸³:

Ամենայն հավանականությամբ, սակայն, արհեստագործության զարգացման այդ ծրագիրը չի իրագործվել, իսկ եթե կյանքի է կոչվել, ապա՝ մասամբ, քանի որ Պարսկաստանի ներքաղաքական իրադրության ապակայունացման պայմաններում դա խիստ անհավանական էր. 1907-1908 թթ., ինչպես տեղեկացնում էր Լեփսիուսն իր հրապարակումներից մեկում, այդ երկրում ծավալվող հեղափոխական պայքարի, երթեւեկության ու առեւտրի դադարեցման հետեւանքով որբանոցի ձեռնարկությունները բոլորովին չէին գործում⁸⁴:

Խոսքը վերաբերում է Պարսկաստանում «Ժողովրդի ներկայացուցիչների» սահմանադրական ընդդիմադիր կուսակցության կողմից 1907 թ. կեսերին շահի կառավարության դեմ ծավալված սուր պայքարին, որի նպատակն էր զավթել իշխանությունը: Արյունահեղ պայքարը կարճ ժամանակում տարածվեց երկրի բոլոր շրջաններում, եւ արդեն 1908 թ. Թավրիզում, Սպահանում, Շիրազում, Քերմանշահում, Մազենդերայում, Աստրաբադում, Լարստանում եւ Պարսկաստանի այլ խոշոր կենտրոններում կազմել էին ժամանակավոր ինքնուրույն կառավարություններ, որոնք այլեւս շահին չէին ենթարկվում: Խոյը, որ հարում էր հեղափոխականներին, բնականաբար, նույնպես հայտնվեց պատերազմական իրավիճակում՝ հարկադրված լինելով դիմադրավել կառավարամետ Մակուի զորագնդերի հարձակմանը: Եվ քանի որ Մակուի Սարդարի կոչով՝ Խոյի դեմ պատերազմում ավարառության հույսով նրան միացան նաեւ շրջակայքում ապրող քրդերը, Խոյի հայ բնակչության, նաեւ որբանոցի համար ստեղծվեց անվերահսկելի ու խիստ վտանգավոր իրավիճակ⁸⁵:

Միաժամանակ ներկուսակցական պայքարը, կենտրոնախույս ուժերի հաջողությունները եւ ընդհանուր քառսային վիճակը պատճառ դարձան, որ Թուրքիան նույնպես գործուն քայլեր ձեռնարկի Պարսկաստանի հյու-

⁸² Տե՛ս C. Rubitschung; J. Lepsius, Helft suchen!, էջ 105:

⁸³ Տե՛ս J. Lepsius, Daheim und drauBen, էջ 126:

⁸⁴ Տե՛ս Generalversammlung der Deutschen Orient-Mission, „ChOr“, 1908, էջ 90:

⁸⁵ Տե՛ս A. Harnack, Unruhen in Persien, „ChOr“, 1907, էջ 47:

սիսային հատվածում տարածքներ ձեռք բերելու ուղղությամբ: Օգտվելով իրադրությունից՝ Թուրքիան 1907 թ. գրավեց Ուրմիայի եւ Սաուսքուլաղի միջեւ ընկած քրդաբնակ տարածքները⁸⁶, ինչի հետեւանքով քրդերը, լքելով իրենց բնակավայրերը, ներխուժեցին հարեւան մահմեդական եւ քրիստոնյա գյուղերը: Ինչպես տեղեկացվում էր ԳԱԱ-ի կոչերից մեկում, արդեն 1908 թ. ապրիլին նրանք Խոյի, Սալմաստի եւ Ուրմիայի շրջակայքում ավերել էին թուրքական բազմաթիվ գյուղեր, բնակչությանը կոտորել եւ թալանել՝ մեծ սպառնալիք դառնալով նաեւ նշյալ քաղաքների համար⁸⁷: Քրդերի ավերումն ու թալանն առավել մեծ չափերի հասավ տարեվերջին: 1908 թ. դեկտեմբերից մինչեւ 1909 թ. մայիս Խոյի շրջակայքում նրանք հիմնահատակ ավերել էին թուրքական մոտ 60 գյուղ⁸⁸:

Այն փաստը, որ Սարգարի եւ նրան միացած քրդերի գործողությունները հիմնականում ուղղված էին թուրք բնակչության դեմ, ուներ իր պատճառները: Չնայած հայերը Խոյում եւ տարածաշրջանում թվաքանակով քիչ էին, քան թուրքերը, պարսիկները կամ քրդերը, սակայն համարվում էին բնակչության ամենաուժեղ տարրը, քանի որ, ինչպես տեղեկացնում էր Ա. Հառնակը, կոչվում անգերազանցելի էին եւ «իրենց քաջության շնորհիվ ամենուր սարսափ էին տարածել»⁸⁹: Խոսքը, անշուշտ, վերաբերում էր այդ իրադարձությունների ընթացքում կազմավորված հայկական զինված մի շարք խմբերին. չնայած նրանք պատերազմող կուսակցություններից որեւէ մեկին չէին հարում եւ նպատակ ունեին միայն ապահովել հայ բնակչության անվտանգությունն ու սահմանափակվել ինքնապաշտպանությամբ, այնուամենայնիվ, Խոյին սպառնացող ընդհանուր թշնամու՝ քրդերի դեմ համատեղ պայքարը նպաստում էր նրանց եւ թուրքերի մերձեցմանը եւ, ինչպես Հառնակն էր վկայում, Խոյի եւ շրջակայքի թուրք բնակչությունը հայ փոքրաթիվ «հեղափոխականներին» պաշտպանության ներքո առավել ապահով էր զգում «սպառնացող քրդական հորդաների» դեմ⁹⁰:

⁸⁶ Տե՛ս **R. Schäfer**, Geschichte der Deutschen Orient-Mission, էջ 56:

⁸⁷ Տե՛ս „Generalversammlung“, „ChOr“, 1908, էջ 69:

⁸⁸ Տե՛ս **A. Harnack**, Erretung, „ChOr“, 1909, էջ 100:

⁸⁹ Անդ, էջ 101:

⁹⁰ Տե՛ս **A. Harnack**, Wandlungen in Persien, „ChOr“, 1910, էջ 12. «Այդ պայքարի, հուզումների եւ վտանգների մեջ տեղի ունեցավ թոփաքային փոփոխություն մահմեդականների եւ քրիստոնյաների փոխհարաբերության մեջ, հայերը վճռական առավելություն ունեին. նրանք հուսալիորեն պաշտպանված էին իրենց «հեղափոխականների» միջոցով, որոնց համարձակությունը ողջ երկրում հռչակված էր ու երկյուղ էր ներշնչում, եւ

Հատկանշական է, որ պատերազմող երկու կուսակցություններն իրենց հաղթանակի բանալին տեսնում էին հայերի ձեռքում, ուստի ջանում էին նրանց հետ դաշնակցել, իսկ եթե դա անհնար էր, ապա՝ պահպանել չեզոք հարաբերություններ: Այդ պատճառով, ինչպես նշում էր Ա. Հառնակը, Մակուկի զորաբանակի ղեկավարները շարունակ հայտարարում էին, որ նրանք հայերի դեմ ոչինչ չունեն, այլ կամենում են միայն պատժել «թուրք խռովարարներին»: Այդ բանակում այն համոզումն էր իշխում, որ խոյը վաղուց իրենց ձեռքում կլինեի, եթե «մեկ դյուծին հայ հեղափոխականներն իրենց դեմ չկռվեին»⁹¹:

Ինչեւէ, չնայած հայերը չեզոք եւ ինքնապաշտպանական դիրքորոշում էին որդեգրել, ու 1908 թ. նրանց մարտունակությունը շնորհիվ հայկական գյուղերը (Յեղավար, Շորաֆ, Դիզա, Կարանջալու եւ այլն) հիմնականում զերծ էին մնում Մակուկի զնդերի եւ նրանց դաշնակցած քրդերի ասպատակություններից, այնուամենայնիվ, խոյի անկումը կարող էր ճակատագրական լինել նաեւ հայերի համար: Քաղաքի գրավման վտանգն առավել ակնառու դարձավ 1909 թ. սկզբին, երբ Մակուկի քրդական ջոկատներն արագ առաջանում էին դեպի խոյ⁹²: Կասկած չկար, որ նրանց ներխուժման դեպքում նույնիսկ որբանոցը չէր խնայվի: Ուստի, Հառնակը մարտի 1-ին դիմեց Թեհրանի գերմանական ներկայացուցչությանը՝ խնդրելով նրա միջնորդությունը, որ Պարսկաստանի կառավարությունը խոյի գրավման դեպքում Սարդարին պարտավորեցներ հոգ տանել որբանոցի անվտանգության մասին: Գերմանիայի ներկայացուցիչն իր հերթին այդ նամակի հիմամբ դիմեց Պարսկաստանի արտաքին գործերի նախարարին, շահի գնդերի հրամանատարին, ինչպես եւ շահի կողմնակից քուրդ առաջնորդներին՝ խնդրելով համապատասխան հրամաններով ապահովել խոյի եւ Ուրմիայի որբանոցների անվտանգությունը⁹³:

Այդ միջոցառումները, սակայն, հազիվ թե որեւէ ազդեցություն գործեին քուրդ խուժանի վրա, եւ որբանոցն ապրում էր մշտական երկյուղի մեջ: Ի վերջո, 1909 թ. մարտի 13-ին հեղափոխականները եւ նրանց հետ միասին խոյի պաշտպանության համար կռվող հայերը քաղաքի մատույց-

կառավարության կողմից, հավանաբար քաղաքական դրդապատճառներով, մեծագույն հարգանքի էին արժանանում: Նրանք մեծավ մասամբ սահմանափակվում էին ինքնապաշտպանությամբ». անդ, էջ 29-30:

⁹¹ A. Harnack, Erretung, „ChOr“, 1909, S. 101.

⁹² Sten Klein, Khoi bedroht, „ChOr“, 1909, էջ 63:

⁹³ Անդ, էջ 64:

ներում քրդերից պարտուկություն կրեցին, եւ ողջ բնակչութիւնը մատնվեց խուճապի: Քաղաքի հայաբնակ արվարձանային թաղամասերի բնակիչները, լքելով իրենց տները, հոծ զանգվածով գնում էին միակ հուսալի վայրը՝ որբանոց, որը նրանց առջեւ բացել էր իր դռները: Հսկա կառույցի բոլոր սենյակները, նաեւ հիվանդասենյակը, մառանն ու արհեստանոցը հաշվված ժամերի ընթացքում լցվեցին հայ փախստականներով: Ա. Հառնակը նրանց էր հատկացրել նաեւ իր բնակարանը: «Ես շաբաթներ ի վեր դրա համար նախապատրաստվել էի, - տեղեկացնում էր նա իր՝ մարտի 18-ին թվագրված նամակում: - Թե քանիսին ենք ապաստան տվել, ճշգրիտ չեմ կարողացել հաշվել: Մակերեսային հաշվարկներով այդ թիվը տատանվում է 300-400-ի միջեւ»⁹⁴:

Բարեբախտաբար, անհասկանալի պատճառներով քրդերը քաղաք չմտան, այլ առժամանակ ամրացան Խոյի թուրքաբնակ արվարձաններից մեկում եւ 14 օր հետո, ավերելով Խոյի շրջակա գյուղերը, հեռացան⁹⁵: Քրդերի դեմ լիարժեք հակակշիռ ստեղծվեց եւ քրդական ներխուժումների վտանգը վերացավ միայն 1912 թ. սկզբին, երբ ռուսական բանակը Պարսկաստանի հյուսիսային մի շարք այլ շրջանների հետ միասին գրավեց նաեւ Խոյը, եւ այնտեղ հաստատվեց խաղաղությունը⁹⁶: Իսկ մինչ այդ Խոյի իրադրությունը շարունակում էր մնալ ծայրաստիճան լարված⁹⁷:

Այսպիսով, որբանոցը ոչ միայն ծնողազուրկների օթեւան եւ կրթօջախ էր, այլ վտանգի ու կարիքի դեպքում՝ նաեւ պատսպարան Խոյի եւ շրջակա գյուղերի հայություն համար. առավել ծանր տարիներին այն չտապ օգնություն դարձավ նաեւ ունեզուրկների ու հիվանդների համար՝

⁹⁴ Տե՛ս J. Lepsius, Khoi bedroht, էջ 71-72:

⁹⁵ Տե՛ս A. Harnack, Errettung, էջ 99-100:

⁹⁶ Տե՛ս A. Harnack, Russland in Persien, „ChOr“, 1912, էջ 71:

⁹⁷ Մայիսի սկզբին շահն ընդդիմության հետ հաշտություն կնքեց՝ վավերացնելով սահմանադրությունը: Նրան հաջորդը՝ Մուհամեդ Ալին, սակայն, ամռան սկզբին սահմանադրությունը չեղյալ հայտարարեց, որի հետեանքով քաղաքացիական պատերազմը վերստին բորբոքվեց, իսկ հուլիսի 15-ին սահմանադրականները գրավեցին նաեւ երկրի մայրաքաղաքը՝ նրան հարկադրելով հրաժարական տալ: Պարսկաստանի նոր շահ Նշանակվեց 9-ամյա թագաժառանգ Ահմեդ Միրզան: Մուհամեդ Ալին, սակայն, կարճ ժամանակ անց իր կողմը գրավելով նաեւ քրդական մի քանի ցեղերի՝ հրահրեց մի նոր պատերազմ, որը ձգվեց մինչեւ 1911 թ. վերջը՝ ավարտվելով սահմանադրականների հաղթանակով. տե՛ս Wegener, Chronik der wichtigsten politischen Ereignisse in der Türkei und Persien, էջ 190. հմմտ. R. Schäfer, Geschichte der Deutschen Orient-Mission, էջ 74:

առանց կրոնական եւ ազգային խտրականության նրանց եւս ցուցաբերելով բժշկական օգնություն⁹⁸:

Աղքատներն ու հիվանդները որբանոցից պարբերաբար ստանում էին նաեւ սննդամթերք եւ դրամ: Չնայած այդ մասին վիճակագրական որոշակի տվյալներ չեն հաղորդվում, սակայն մարդասիրական այդ օգնությունն ուներ լայն ընդգրկում, առանց որի հարյուրավոր մարդիկ կդատապարտվեին սովահարություն⁹⁹:

Ինչեւէ, մասնաճյուղի երախտավոր գործունեությունը դեռ երկար կշարունակվեր, եթե չբռնկվեր աշխարհամարտը: Չնայած Պարսկաստանը պատերազմին չէր մասնակցում եւ համարվում էր չեզոք երկիր, այնուամենայնիվ, չէր կարող ամբողջովին խուսափել պատերազմական իրադարձություններից: Դեռ պատերազմի բռնկումից առաջ երկրի հյուսիսային հատվածում, նաեւ Խոյում դրություն տերը ռուսական կազակային զորամասերն էին, ու քաղաքը փաստորեն ապրում էր ռազմական իրադրություն պայմաններում՝ պատերազմում Թուրքիայի հավանական ներգրավումից հետո մարտական գործողությունների թատերաբեմ դառնալու տագնապով: 1914 թ. սեպտեմբերի 2-ին ռուսական հյուպատոսը կարգադրեց փակել Խոյի որբանոցը՝ դա պատրվակելով անգլիական բանկում հաստատության ունեցած պարտքով¹⁰⁰: Չնայած Ա. Հառնակի հարցման միջոցով պարզ դարձավ, որ բանկը նման պահանջ չէր առաջադրել, այնուհետեւ որբանոցի կառավարչուհու եւ Թավրիզի գերմանական հյուպատոս Լիտենի կողմից՝ հիշյալ հրամանի առնչությամբ բողոքներ ուղղվեցին ռուսական, ամերիկյան հյուպատոսներին եւ Խոյի պարսիկ նահանգապետին, այնուամենայնիվ, դրանք էական արդյունք չտվեցին: Հաջորդեց միայն կարճ ժամանակով պահպանել երեխաների բնակության սենյակները եւ հետաձգել նրանց վտարումը, իսկ հաստա-

⁹⁸ 1908 թ. Խոյում ոչ մի բժիշկ չկար, հայ եւ մահմեդական հիվանդները դիմում էին որբանոցին՝ ստանալով անհրաժեշտ օգնությունը. տես **A. Harnack**, Bilder aus dem muhammedanischen Leben in Persien, „ChOr“, 1913, էջ 35. հմմտ. **A. Harnack**, Errettung, „ChOr“, 1909, էջ 102:

⁹⁹ Տես **S. Garabedian**, Khoi und unsere Arbeit, „ChOr“, 1912, էջ 32-33:

¹⁰⁰ Քանի որ Գերմանիայի հետ կապը խզված էր, եւ այնտեղից օգնություն չէր կարող ստացվել, Ա. Հառնակը անգլիական բանկից վարկ էր վերցրել, եւ ըստ ռուսական կողմի՝ վերջինս պարտքը չվերադարձնելու պատճառով պահանջել էր որբանոցը փակել. տես **A. Harnack**, Die Schließung unseres armenischen Waisenhauses in Khoi durch die Russen, էջ 168-169:

տուլթյան մնացյալ տարածքը, ներառյալ Ա. Հառնակի բնակարանը, հիշյալ օրը բռնագրավվեցին:

Որբանոցի շարժական գույքը կուտակվեց մի քանի սենյակում, իսկ Ա. Հառնակը, ժամանակավորապես ապաստանելով մի հյուղակում, հաջորդ օրը ձեռնամուխ եղավ երեխաներին որբանոցից դուրս բերելու ել վստահելի հայ ընտանիքներին հանձնելու գործին: Մի քանի օրում որբանոցն արդեն իսպառ դատարկված էր: Ա. Հառնակը գրում է. «Պատերն առանց երեխաների տխուր էին... սակայն փորձում էի դիմանալ: Եթե ինձ հանգիստ թողնեին, լավագույն տարբերակը կհամարեի մնալը: Մնալու դեպքում ես կարող էի մեր տունը պաշտպանել հետագա ավերումներից, հետեւել երեխաներին, հայերի համար, հավանաբար, դարձյալ բացել իմ տան դռները, եթե բանն իրոք հասներ ռուս-թուրքական պատերազմին: Այլապես ամեն ինչ ծանր ու տխուր էր: Մարդ իրեն զգում էր իբրեւ ժանտախտով հիվանդ...»¹⁰¹:

Ա. Հառնակի համար, սակայն, անհնար էր մնալ ինչպե՞ս. նրա հասցեին արդեն հնչում էին լրտեսության մեղադրանքներ¹⁰²: Նրան կարգադրվեց մեկնել Թավրիզ. սեպտեմբերի 15-ին հայ երկու ուսուցչուհիների հետ մեկնեց այնտեղ՝ տեղավորվելով գերմանական հյուպատոսարանում¹⁰³: Հոկտեմբերի վերջին, երբ Թուրքիան եւս մտավ պատերազմի մեջ, Թավրիզի գերմանական գաղութի ղրուլթյունը բարդացավ: Նրա անդամները, այդ թվում նաեւ Հառնակը հարկադրված դիմեցին ամբիկյան հյուպատոսությանը՝ հովանավորության խնդրանքով. վերջինիս միջամտությամբ ստանալով հայրենիք վերադառնալու թույլտվություն՝ նոյեմբերին մեկնեցին Գերմանիա¹⁰⁴:

Նույն ճակատագրին արժանացավ նաեւ Ուրմիայի ասորական որբանոցը, որի գերմանացի աշխատակիցները (Ա. Ֆրիդեմանը եւ օրիորդ Ռիխտերը), նոյեմբերի 4-ին երեխաներին ազատ արձակելով, վերադարձան Գերմանիա¹⁰⁵:

¹⁰¹ Անդ, էջ 169-170:

¹⁰² Անդ, էջ 169:

¹⁰³ Անդ, էջ 174:

¹⁰⁴ Տե՛ս **A. Harnack**, Unfreiwillige Heimkehr, „ChOr“, 1915, էջ 19-20:

¹⁰⁵ Տե՛ս **M. Friedemann**, Das Mutter-Annen-Buch, Potsdam 1927, էջ 154-155. Ա. Ֆրիդեմանը մեկնումից առաջ կարողացավ միայն 4 որբի տեղավորել ընտանիքներում, իսկ մյուսները դարձյալ մնացին անօթեւան. „Brief aus Urmia von unserem Waisenmädchen Sultü Temris“, „ChOr“, 1915, էջ 93:

Պարսկաստանում գործող խիստ գրաքննությունյան պայմաններում, բնականաբար, անհնար էր այնտեղից փոստային կապով տեղեկություններ ուղարկել Գերմանիա, եւ ԳԱԱ-ն խոյի որբանոցի փակման մասին առաջին տեղեկությունն ստացավ Ա. Հառնակի՝ Բուլղարիայով ուղարկված հակիրճ եւ սրտառու հաղորդագրությունից. «Ես այժմ Թավրիզի գերմանական հյուպատոսությունում եմ: Խնդրում եմ պարոն Լեփսուսին տեղեկացրեք, որ որբ երեխաները լավ պահված են... Մեր իրերը փակվել եւ կնքվել են մի քանի սենյակներում, մնացածը վերցվել են կազակների կողմից...»¹⁰⁶:

Կազմակերպության վարչությունն այնուհետեւ բողոքներ հղեց Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը եւ Թեհրանի գերմանական դեսպանությանը՝ չեղոք երկրում «ռուսական հրամանով» գերմանական որբանոցների փակումը, կանանց ու երեխաների բռնի վտարումը դատապարտելով որպես միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ¹⁰⁷: Դրանք, սակայն, որեւէ արդյունք չէին կարող տալ, եւ խոյի որբանոցը հատկացվեց կազակներին՝ որպես զորանոց¹⁰⁸: Ինչ վերաբերում է Ա. Հառնակին, ապա վերադարձից հետո նա աշխատանքի նշանակվեց ռազմական գործարաններից մեկում՝ զբաղվելով բանվորուհիների սոցիալական ապահովության խնդիրներով¹⁰⁹: Միաժամանակ նա ջանում էր տեղեկություններ հայթայթել խոյի հայերի եւ որբանոցի երեխաների մասին՝ հոսսալով պատերազմից հետո դարձյալ վերադառնալ այնտեղ ու շարունակել իր առաքելությունը: Երթեկությունն եւ փոստային կապի բացակայության պատճառով, սակայն, պատերազմի տարիներին նրան չհաջողվեց հավաստի տեղեկություններ ստանալ, իսկ հետագայում ստացված կցկտուր լուրերը հուսալքող էին: 1919 թ. սկզբին հայտնի դարձավ, որ խոյի որբանոցը հիմնահատակ թալանված եւ ավերված էր¹¹⁰, իսկ 1920 թ. ստացված տեղեկության համաձայն՝ 1917 թ. խոյի ու շրջակա գյուղերի հայ բնակչությունը թուրքերի եւ քրդերի կողմից գրեթե ամբողջովին կոտորվել էր¹¹¹: Ա. Հառնակը մեծ ջանքերի գնով կարողացավ 1921 թ.

¹⁰⁶ Այն թվագրված էր՝ 1914 թ. հոկտեմբերի 15. տես „Nachrichten von den Stationen“, „ChOr“, 1914, էջ 144:

¹⁰⁷ Տես „Nachricht“, էջ 174:

¹⁰⁸ Տես „Nachrichten von den Stationen“, էջ 144-145:

¹⁰⁹ Տես „Aus Briefen unserer Mitarbeiter“, „ChOr“, 1917, էջ 39-40:

¹¹⁰ Տես **A. Harnack**, Aus Persien, „ChOr“, 1919, էջ 7:

¹¹¹ Տես **A. Harnack**, Brief an die Pflegeeltern der Khoier Waisen Kinder, „ChOr“, 1921, էջ 2:

կապ ստեղծել իր երկու սաների՝ Շողակաթ Բաղալյանի եւ Թեյլի Օհանյան-Գրիգորյանի հետ, որոնք հաստատեցին այդ տեղեկությունները¹¹²:

Ինչեւէ, ԳԱԱ-ն այլեւս հնարավորություն չունեցավ վերսկսել իր գործունեությունը Պարսկաստանում: Իսկ ինչ վերաբերում էր ընկերության՝ այնտեղ գտնվող սեփականությունը, ապա չնայած այդ երկրի կառավարությունը պաշտոնապես ստանձնել էր ինչպես Խոյի, այնպես եւ Ուրմիայի որբանոցների ու նրանց ունեցվածքի պահպանման պատասխանատվությունը¹¹³, սակայն դա ուներ սոսկ ձեւական նշանակություն, եւ ԳԱԱ-ի վնասները երբեւէ չփոխհատուցվեցին:

РЕЗЮМЕ

После Амидской резни основанная Иоганнесом Лепсиусом организация «Восточная миссия» еще с 1896 года предприняла спасательные работы для переживших резню армян, которые находились в крайней нужде. Спасательные убежища были созданы также в Персии, где нашли пристанище многотысячные армянские и ассирийские беженцы. В статье освещаются осуществленные организацией арменофильские работы в Персии, которые непрерывно продолжались до разрастания Первой мировой войны. Благодаря им многочисленные армянские сироты и вдовы спаслись от голодной смерти. В статье досконально, в частности посредством впервые включенных в научную циркуляцию первоисточников, освещаются не только вышеуказанные спасательные работы, но и те методы и принципы по которым они осуществлялись. Однозначно отрицая осуществление проповедничества вероотступничества среди верующих Армянской Апостольской Церкви и находящихся под их опекой армянских сирот, организация и действующие в Персии ее сотрудники не только исчерпывающе обосновали свою позицию, но и подвергли острой критике ряд стереотипов, укоренившихся на Востоке об Армянской Апостольской Церкви и армянском народе. Работы убежища освещаются в контексте происходивших в Персии межгородских событий.

¹¹² Տե՛ս **A. Harnack**, Nachrichten aus Persien, էջ 63. հմմտ. „Briefe aus Persien an Frl. Harnack“, „ChOr“, 1922, էջ 25:

¹¹³ Տե՛ս **A. Harnack**, Die Schließung unseres armenischen Waisenhauses in Khoi durch die Russen, „ChOr“, 1914, էջ 172-174:

SUMMARY

After the perpetration of Hamidian massacres, the organization “German Eastern Mission”, founded by Dr. J. Lepsius since 1896 undertook salvage operations for the Armenians that had survived the massacres and were in extreme need. Among other places, asylums were established also in Persia, where thousands of Armenian and Assyrian refugees found shelter. The article outlines the Armenophile activities of the organization implemented in Persia, which continued uninterruptedly until the outbreak of the World War II. Thanks to them, it became possible to save a large number of Armenian orphans and helpless widows, who would be otherwise condemned to starvation. Trough sources included in scientific circulation, many times and particularly for the first time, the article covers not only the above-mentioned salvage operations, but also the principles and methods, according to which they were implemented. By explicitly rejecting the promotion of apostasy among the faithful of the Armenian Apostolic Church and among the Armenian orphans under her patronage, the organization and its employees in Persia not only did substantiate their position, but also harshly criticized some Western stereotypes about the Armenian Apostolic Church and the Armenian people. The activities of the asylum are covered in the context of domestic political events in Persia.